Հաստատվեց
31.08.2023թ.

Խոտի միջնակարգ դպրոցի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալի Լ.Ղազարյանի տարեկան աշխատանքային պլան 2023-2024թ

Հաստատվեց
31.08.2023թ.

Խոտի միջնակարգ դպրոցի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալի Լ.Ղազարյանի տարեկան աշխատանքային պլան 2023-2024թ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼ

1. Պաշտոնային պարտականությունները՝

1) կազմակերպում և իրականացնում է ուսումնական հաստատությունում կրթության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված միջոցառումներ.

2) համակարգում է մասնագիտացված կրթական աջակցության ծառայությունները.

3) համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով.

4) կազմակերպում և ղեկավարում է սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը.

5) ապահովում է հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը: Կազմակերպում է սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար.

6) ուսումնական հաստատության, նրա ստորաբաժանումների մեթոդական միավորումների ղեկավարներին և մանկավարժական աշխատողներին գործնական օգնություն է ցույց տալիս ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում.

7) ընդհանրացնում և միջոցներ է ձեռնարկում դաստիարակչական գծով մանկավարժական աշխատողների արդյունավետ, սահմանված կարգով երաշխավորված փորձը տարածելու համար.

8) աշխատանք է տանում սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցում դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը.

9) հսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ.

10) հսկում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարումը.

11) կազմակերպում է ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ, նպաստում հանրակրթության միջոցով ազգային փոքրամասնությունների համայնքների լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի իրականացմանը.

12) մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը:

2. Տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները՝

1) տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին և կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝

ա. «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Կրթության պետական տեսչության մասին» օրենքները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը, իր պաշտոնային պարտականություններին վերաբերող՝ նախարարության համապատասխան նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր,

բ. մանկավարժության, հոգեբանության, ֆիզիոլոգիայի, հիգիենայի հիմունքները,

գ. աշխատանքի անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային անվտանգության կանոնները, առաջին բուժօգնության օգնության հիմունքները, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները.

2) տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է կարողանա՝

ա. կազմակերպել սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը,

բ. ապահովել սովորողի ընտանիքի հետ դպրոցի սերտ կապն ու համագործակցությունը,

գ. կազմակերպել սովորողների հանգիստն ու ժամանցը, նպաստել սոցիալապես անապահով և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության իրականացմանը,

դ. աջակցել և ուղղորդել աշակերտական խորհուրդների աշխատանքը, ստեղծել պայմաններ հաստատության հասարակական վերահսկողության իրագործման համար:

3. Որակավորման պահանջը՝

1) հանրակրթական ուսումնական հաստատության մասնագիտացված կրթական աջակցությունների աշխատանքի գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) և մանկավարժական, գիտական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ՝ վերջին յոթ տարվա ընթացքում:

2023-2024 ուստարվա Խոտի միջնակարգ դպրոցի կոմպլեկտավորում

Դաս.	Աշ. թիվը	Տղա	Աղջիկ	Դասվար-դասղեկ
I	15	9	6	Սիմոնյան Նոյեմ
II	18	10	8	Իվանյան Նարա
III	15	6	9	Մաթևոսյան Ռամելա
IV	14	6	8	Հակոբյան Ժասմեն
V	15	9	6	Մաթևոսյան Շուշաննա
VI	17	8	9	Հակոբյան Քնարիկ
VII	12	6	6	Հովսեփյան Մարիամ
VIII	11	8	3	Առաքելյան Նելլի
IX	21	10	11	Աղամալյան Մերի
X	19	7	12	Միրզոյան Ռուզաննա
XI	11	6	5	Մինասյան Լուսինե
XII	12	8	4	Սարգսյան Հայկուշ
Ընդ.	180	93	87	

Դաստիարակչական աշխատանքների
Պլան
2023-2024 ուստարի

Դպրոցում աշակերտների թիվը 180 է , որից տարրական դպրոցում սովորում է 62 աշակերտ, հիմնական դպրոցում 76 աշակերտ, ավագ դպրոցում 42 աշակերտ.

1. Աշակերտների արտադպրոցական զբաղվածությունը 60%
2. Սոցիալապես անապահով աշակերտներ 30
3. Ծնողազուրկ աշակերտներ 2 /միակողմանի/
4. Բազմազավակ ընտանիքներ 65

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպչական բաժին

N	Աշխատանքի բովանդակությունը	Պատասխանատու	Ժամկետ	Նշումներ
1.	Կազմակերպել 6 տարեկան երեխաների մուտքը դպրոց	ՄԿԱ գծով փոխտնօրեն, դասվարներ	Սեպտեմբեր	
2.	Հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել դասագրքերով և գրենական պիտույքներով	ՄԿԱ գծով փոխտնօրեն	Սեպտեմբեր	
3.	Կատարել միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների հաշվառում:Հնարավորության դեպքում աջակցել:	ՄԿԱ գծով փոխտնօրեն, դասղեկներ	Սեպտեմբեր	
4.	Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգի բացակայությունների նկատմամբ , ժամանակին կանխել դրանք, առաջնորդվել օրենքով սահմանված կարգով:	ՄԿԱ գծով փոխտնօրեն,	Ուստարվա ընթացքում	
5.	Ուշադրության կենտրոնում պահել ետ մնացող աշակերտներին:	Փոխտնօրեններ , դասղեկներ	Ուստարվա ընթացքում	

6.	Աշխատանք տանել 5-12-րդ դասարանների դժվար դաստիարակվող երեխաների և նրանց ծնողների հետ:	ՄԿԱ գծով փոխտնօրեն , դասղեկներ	Ուստարվա ընթացքում	
7.	Դասղեկական աշխատանք: Պաշտոնային պարտականությունը:Կազմակերպել և վերահսկել դասղեկների գործունեությունը: Դասղեկների աշխատանքային պլանների վերահսկում և ներկայացում հաստատման:	ՄԿԱ գծով փոխտնօրեն , դասղեկներ	Սեպտեմբեր	
8.	Դասղեկների ժամերի մշտադիտարկում :	ՄԿԱ գծով փոխտնօրեն	Պարբերաբար	
9.	Սեմինար խորհրդակցություններ դասղեկների հետ	ՄԿԱ գծով փոխտնօրեն	Ամեն ամիս	
10.	Կիսամյակը 1-2 անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով:Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ – դպրոց ընտանիք կապը:	ՄԿԱ գծով փոխտնօրեն , դասղեկներ, դասվարներ	Պարբերաբար	
11.	Դասալսումներ՝դասի դաստիարակչական կողմը գնահատելու նպատակով:	ՄԿԱ գծով փոխտնօրեն	Պարբերաբար	
12.	Սեմինար խորհրդակցություններ՝նվիրված դասալսումների վերլուծությանը:	ՄԿԱ գծով փոխտնօրեն	Պարբերաբար	

Գեղագիտական դաստիարակություն մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում

N	Աշխատանքի բովանդակությունը	Պատասխանատու	Ժամկետ	Նշումներ
1.	Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ:	ՄԿԱ գծով փոխտնօրեն, դասղեկներ	Պարբերաբար	
2.	Այցելություններ գրողների տուն- թանգարան:	Հայոց լեզվի և պատմության մասնախմբեր	Ուստարվա ընթացքում	
3.	Ամանորյա միջոցառումներ, դիմակահանդեսներ	ՄԿԱ գծով փոխտնօրեն դասղեկներ	Դեկտեմբեր	
4.	Ազգային ավանդույթներ և տոներ	ՄԿԱ գծով փոխտնօրեն, դասղեկներ, դասվարներ	Փետրվար	
5.	Հանդիպում արվեստի բնագավառի աշխատողների հետ:	ՄԿԱ. գծով փոխտնօրեն, պատմության ուսուցիչներ	Մարտ	

6.	Երգի և ասմունքի մրցույթ՝ նվիրված գարնանը և մարտի 8-ին	ՄԿԱ. գծով փոխտնօրեն, երգ-երաժշտության ուսուցիչ	Մարտ	
7.	Բնության զարթոնքին նվիրված միջոցառումներ	ՄԿԱ. գծով փոխտնօրեն, երգ-երաժշտության ուսուցիչ	Մայիս	

Ֆիզիկական առողջություն
Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում

N	Աշխատանքի բովանդակությունը	Պատասխանատու	Ժամկետ	Նշումներ
1.	Սովորողների ֆիզիկական դաստիարակության բարելավման նպատակով մարզադահլիճը հնարավորության պայմաններում հարստացնել մարզական գույքով:	ՄԿԱ. գծով փոխտնօրեն, տնտ. գծով. փոխտնօրեն	Ուստարվա ընթացքում	
2.	Ստեղծել մարմնամարզական խմբակներ տարբեր մարզաձևերից:	ՄԿԱ. գծով փոխտնօրեն, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ	Ուստարվա ընթացքում	
3.	Բուժքրոջ միջոցով պարզել աշակերտների առողջական վիճակը, ստեղծել ֆիզկուլտուրայի հատուկ խմբակներ, հետևել պարապմունքների անցկացմանը:	ՄԿԱ գծով փոխտնօրեն	Սեպտեմբեր	

4.	Անցկացնել միջդասարանական, միջդպրոցական միջոցառումներ:Այն կազմակերպել բարձր մակարդակով՝ նախապես իրազեկելով դասղեկներին և աշակերտներին:	ՄԿԱ. գծով փոխտնօրեն, ֆիզկուլտու րայի ուսուցիչներ	II կիսամյակի ընթացքում	
5.	Քննարկումներ, զրույցներ տարբեր դասարաններում հայ մարզիկների փայլուն հաղթանակների մասին, <<Իմ վերաբերմունքը	ֆիզկուլտուրայի ուսուցիչներ	Նոյեմբեր	
6.	առողջությանս>>:			
7.	ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օր (միջոցառումներ՝ ուղղված իրազեկվածությանը ՁԻԱՀ-ով հիվանդների հանդեպ հոգատարության և անխտրականության վերաբերմունքի դաստիարակության):	Բուժքույր, կենսաբանության ուսուցիչներ, դասղեկներ	Դեկտեմբեր	

8.	Զմեռային արձակուրդների ժամանակ կազմակերպել <<Զմեռային խաղեր>> միջոցառումներ:	ֆիզկուլտուրայի ուսուցիչներ	Փետրվար	
9.	Բնության գրկում ֆիզկուլտ արշավներ, դահուկավազք:	ֆիզկուլտուրայի ուսուցիչներ	Փետրվար	
10.	Սպորտային մրցումներ՝ <<Ուժեղները, համարձակները ու ճարպիկները>>:	ֆիզկուլտուրայի ուսուցիչներ դասվարներ, դասղեկներ	Մարտ-ապրիլ	
11.	Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել <<Առողջության օր>>:Դպրոց հրավիրել բուժքրոջը ,կազմակերպել զրույց – զեկույցներ աշակերտների շրջանում:	ՄԿԱ. գծով փոխտնօրեն, բուժքույր	Ուստարվա ընթացքում	
12.	Խմբակների մասնակիցների և մարզական սեկցիաների հաշվետվու ելույթներ, արշավներ, էքսկուրսիաներ:	ֆիզկուլտուրայի ուսուցիչներ դասվարներ, դասղեկներ	Մայիս	

Քաղաքացիական , բարոյական դաստիարակություն

Քաղաքացիական ակտիվ դիրքորոշման, պատասխանատվության , արժանապատվության ձևավորման. հարգանք երկրի մշակույթի և պատմության հանդեպ:

N	Աշխատանքի բովանդակությունը	Պատասխանատու	Ժամկետ	Նշումներ
1.	Ուսուցչի օրվան նվիրված դասարանական զրույցներ	ՄԿԱ գծով փոխտնօրեն դասղեկներ	հոկտեմբեր	
2.	Էքսկուրսիաներ, այցելություն պատմա-մշակութային հուշարձաններ	ՄԿԱ գծով փոխտնօրեն, դասղեկներ	Պարբերաբար	
3.	Բանակի օրվան նվիրված միջոցառումներ	ՄԿԱ գծով փոխտնօրեն, զինղեկ,	Հունվար	
4.	Տյառնընդառաջ տոնի խորհուրդը	Պատմության մասնախումբ Եկեղեցու պատմության ուսուցիչներ	Փետրվար	
5.	Սուրբ Սարգսի տոն	դասվարներ դասղեկներ	Փետրվար	

6.	Կանանց միամսյակին նվիրված օրեր:	պատմության ուսուցիչներ	Մարտ	
7.	Մեծ Եղեռնի հիշատակմանը նվիրված միջոցառումներ, բաց դասեր:	ՄԿԱ գծով փոխտնօրեն, դասղեկներ	Ապրիլ	
8.	Աշխատանքի կարևորման օր, աշխատանք դպրոցամերձ տարածքում:	Տնօրինություն, համայնքապետարան, տեխնոլոգիայի ուսուցիչներ	Մայիս	
9.	Մեծ Հայրենականի հաղթանակի օրը:	ՄԿԱ գծով փոխտնօրեն, երգ-երաժշտության ուսուցիչ	Մայիս	
10.	Անցկացնել «Վերջին դաս» միջոցառումը:	ՄԿԱ գծով փոխտնօրեն, Դասղեկներ	Մայիս	
11.	Տարեվերջյան էքսկուրսիաներ	ՄԿԱ գծով փոխտնօրեն, Դասղեկներ	Մայիս	

Աշխատանքային դաստիարակություն
Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում, մասնագիտական կողմնորոշում

N	Աշխատանքի բովանդակությունը	Պատասխանատու	Ժամկետ	Նշումներ
1.	Բարձրացնել աշխատանքային ուսուցման, աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների որակը:	ՄԿԱ գծով փոխտնօրեն, Ուսուցիչներ	Ուստարվա ընթացքում	
2.	Դպրոցամերձ հողամասի մշակման և ծառերի խնամքի աշխատանքները կատարել աշակերտների միջոցով, սեր արթնացնել դեպի աշխատանքը:	ուսուցիչներ	Ուստարվա ընթացքում	
3.	Դասասենյակի նախապատրաստում ձմեռվան:	Դասղեկներ, տ/գ փոխտնօրեն	Նոյեմբեր	
4.	Ձմեռ պապի արհեստանոց (Ամանորին նվիրված աշխատանքներ):	Դասղեկներ	Դեկտեմբեր	

5.	Տարբեր մասնագիտություններին նվիրված միջոցառումներ հայտնի մասնագետների մասնակցությամբ:	Ուսուցիչներ, ծնողխորհուրդ	Փետրվար	
6.	Աշխատանքին, արհեստին նվիրված զրույց միջոցառումներ (հանդիպումներ արհեստավորների հետ՝ դերձակ, ոսկերիչ, կոշկակար):	տնօրինություն, դասղեկներ	Մայիս	

Իրավական դաստիարակություն
Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում

N	Աշխատանքի բովանդակությունը	Պատասխանատու	Ժամկետ	Նշումներ
1.	Դպրոցի կանոնադրությունը, իրավունքներ և պարտականություններ:	ՄԿԱ գծով փոխտնօրեն, Դասղեկներ	Սեպտեմբեր	
2.	Դպրոցական ինքնավարություն, ընտրությունների կազմակերպում:	ՄԿԱ գծով փոխտնօրեն, դասղեկներ	Սեպտեմբեր	
3.	«Մարդու իրավունքների օր»	Հասարակագիտության ուսուցիչ	Դեկտեմբեր	
4.	Հանդուրժողականության հռչակագրի քննարկում՝ այդ թեմայով դասղեկական ժամեր	Դասղեկներ	Հունվար	
5.	Կանանց իրավունքներին, գենդերային խնդիրներին նվիրված միջոցառումներ, զրույցներ:	Դասղեկներ	Փետրվար-մայիս	

Ռազմահայրենասիրական դաստիարակություն
Աշակերտների հայրենասիրական դաստիարակության գործը էլ ավելի բարձր հիմքերի վրա դնելու համար

N	Աշխատանքի բովանդակությունը	Պատասխանատու	Ժամկետ	Նշումներ
1.	Այցելություն Հայրենական Մեծ պատերազմում, Արցախի անկախության, Հայաստանի սահմանների պաշտպանության համար զոհվածների մարտիկների հուշարձաններին:	ՄԿԱ գծով փոխտնօրեն, զինղեկ, Դասղեկներ	Սեպտեմբեր	
2.	Բանավեճ <<Ինչպես կուզենայի տեսնել իմ անկախ Հայաստանը:	Դասղեկներ	Ուստարվա ընթացքում	
3.	Հայ ժողովրդի ազատագրական շարժման այրերը <<Երդվյալ անմահներ>>,Արամ Մանուկյան,Նժդեհ, Մոնթե Մելքոնյան, Թաթուլ Կրպեյան	Զինղեկ, Դասղեկներ	Պարբերաբար	
4.	Հայաստանի Հանրապետության խորհրդանիշերի ուսուցում:	Զինղեկ, դասղեկներ	Հունվար	

5.	Զրույց <<Արցախը իմ հայրենիքն է>> թեմայով	Դասղեկներ	Փետրվար	
6.	Շարադրությունների մրցույթ <<Դու պիտի ծաղկես իմ մանուկ, իմ անկախ Հայաստան>>, << Անկախության սերունդ>> թեմաներով	Հայոց լեզվի և գրակ. մասնախումբ	Մայիս	
7.	Ռազմամարզական խաղեր՝ նախազորակոչային տարիքի երեխաների մասնակցությամբ	Զինղեկ Ֆիզ. ուսուցիչ	Մայիս	

Բնապահպանական դաստիարակություն
Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում

N	Աշխատանքի բովանդակությունը	Պատասխանատու	Ժամկետ	Նշումներ
1.	Ծաղկեփնջերի ձևավորման մրցույթ	Դասվարներ տեխնոլոգիայի ուսուցիչներ	Հոկտեմբեր	
2.	Կլոր սեղան «Երկրագունդը բոլորիս տունն է»	Ավագ դասարանի դասղեկներ	Նոյեմբեր	
3.	Բնության հանդեպ մարդու վերաբերմունքը տարբեր մշակույթներում և ժամանակներում	Կենսաբ. ուսուցիչներ	Փետրվար	
4.	Մերձդպրոցական տարածքի մաքրում, ծառատունկ, կանաչապատում	Տնտ. գծով. Փոխտնօրեն դասղեկներ	Ապրիլ	